

**ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍ**

Յոթերորդ դաս խորագրեմ իմ այս նյութը, որովհետև հենց յոթերորդ դասի տրամաբանության մեջ է այն, ինչին իր գոյությամբ կոչված է «Հայագիտական հանդեսը»:

1960-ականներին իմ հարազատ մանկավարժական ինստիտուտում միայն «Մանկավարժ» բազմատիրաժ թերթով էինք ծանոթանում ինստիտուտի ներքին կյանքին, գրական ու մշակութային անցուղարձին: Ուսանողներին գրած ռեֆերատները ֆակուլտետային գիտխորհրդի նեղ շրջանակում ընթերցվելիք նյութեր էին՝ ոչ հասու մյուս ֆակուլտետների ուսանողությանը:

Հիմա իմ նախկին ինստիտուտը, որ համալսարան է արդեն, «Մանկավարժ»-ից բացի իր հանդեսներն ունի, ուր պրոֆեսորա-դասախոսական կազմի ուսումնասիրություններն են տպագրվում, որոնք մի յուրատեսակ դասախոսություն են ուսանողների համար, եւ նաեւ փորձի տարածման հրաշալի հարթակ:

Շնորհավորում եմ «Հայագիտական» հանդեսի ստեղծման 20 – ամյակը, որն հրատարակվում է եռամսյակը մեկ եւ որն իր հոբելյանական 60-րդ համարով ներկայանում է այս օրերին:

Կրկնեմ միտքս, թե այս հանդեսը մի յուրօրինակ յոթերորդ դաս է վարում, եւ նրա «լսարանում» ուսանողները ծանոթանում են համալսարանի դասախոսների գիտական ուսումնասիրություններին, իսկ դասախոսներն էլ՝ իրենց կոլեգաների նոր գործերին:

Ես, որպես այս ԲՈՒՀ-ի նախկին սան, թերթում եմ հանդեսի տարբեր համարներ, եւ նախկին իմ սիրելի դասախոսների հետ «հանդիպելու» հաճելի առթոներն ունեմ, ուրախանում եմ նրանց նոր գործերով, ուրախանում եմ, որ այս վիրտուալ հանդիպման հնարավորությունը ստանում եմ «Հայագիտական հանդես»-ի միջոցով: Ի՛նչ երեւելի անուններ կան՝ Աշոտ Աբրահամյան, Պետրոս Բեդիրյան, Արշալույս Բաբայան, Տելեմակ Վարդումյան, Ռուբեն Զարյան, Մեդա Միրզոյան, Մոֆիա Լալախանյան... Ստացվում է, որ «Հայագիտական հանդես»-ի շնորհիվ ես շարունակում եմ ուսանել իմ հարազատ նախկին մանկավարժականում եւ իմ սիրելի դասախոսների՝ հանդեսում տպագրվող նյութերով շարունակում եմ նոր գիելիքներ ձեռք բերել եւ իմաստնանալ:

Գուցե այնքան էլ պատշաճ չի, որ ես գովեստներ շոյալեմ հանդեսի գլխավոր խմբագիր Մարտին Գիլավյանի հասցեին, բայց, տեսնելով, թե ինչ

բժախնդրությամբ են ընտրվում նյութերը, ինչ ճաշակով են մատուցվում դրանք, եւ թե ինչպէս է հանդէսն իր մասնակցությունը բերում համալսարանի տարեգրության ստեղծման գործում,- այդուհանդերձ, պէտք է արժանույնս արժեւորվի գլխավոր խմբագրի նվիրումն այս գործում: 1960-ական թվականներից տասնամյակներ անց Մարտին Գիլավյանի անվանը հավելվել է դոկտոր, պրոֆեսոր տիտղոս, եւ լրագրության ու հրապարակախոսության դաշտում էլ եթէ ինչ-որ չափով իմ ոտքերն ամուր հենել եմ գետնին, մեր հոգիներում մեր նախնիկին մանկավարժականի ցանած սերմերի բարեբեր ծլարձակումի արդյունքն է: Ուրեմն, շնորհավոր ծերունագարդ, բայց եւ շա տ ջահել համալսարանի հարյուրամյա, եւ «Հայագիտական հանդէս»-ի 20-ամյա հոբելյանները: